մերաշխութիւնից քայքայված, կամ կեղծ հա-
մերաշխութեամբ միացած հիմքերը չեն կարող
դիմանալ և պատճառ կը դառնան աւելի անո-
ղորմ վերակործանման։ Այդ կենսական ներքին
ուժերից նշանաւորը տնտեսական հարցն է։
Դա կենսական շրջանառութեան յարաբերական
կապն է, մի հանրութեան մէջ գտնված ամեն
աստիճանի դասակարգութեանց համար։

Չը կայ մի դասակարգ, 61-երրորդ յօդուա-
ծի իրագործմանը չը ցանկանար, բայց ամեն մի
դասակարգը իւր ցանկութեան բոլորովին տարբեր
տեսակէտովն է նայում դորա վերայ։

Ինտելլիգենցիան և Տաճկաստանի էֆէնդիների
երեսարած խմբերը նայում են նորա վերայ,
ինչպէս մի միջոցի վերայ, որ նրանց կը մատա-
կարարէ իշխանական ազդեցութիւն, կառավար-
չական բարձր պաշտօններ. դրա համար լինի
թերևս որ այդ խմբերից մի քանիսը արդէն ձգ-
տում են հասնելու ազնվութեան։...

Վաճառական, կալուածատէր, չարչի քաղա-
քացիները երազում են իւրեանց լայնածաւալ
օպերացիայի վերայ, մի այնպիսի գործ, որին
միշտ կը դաշնակցի ազնուական ազդակիցների
տիրապետական ոյժը և դրա համար Տաճկա-
Հայաստանում արդէն գնվել են և գնվում են
լայնատարած գիւղեր, հողեր։

Այժմ համարեա թէ մեծ մասամբ հողատէ-